ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2019 թվականի հունվարի 16 –ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 9 ա դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողներն ու աշակերտները: Ժողովը վարում էր դասղեկ Լուսինե Ազարյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ուսման առաջադիմությունը 1-ին կիսամյակում,1- ին կիսամյակի գնահատականների ամփոփման և հաճախումների արդյունքների հարցը:

2. Քննություններին պատրաստվելու հարցեր:

3.Ընթացիկ հարցեր /կարգապահություն,,հերթապահություն /:

1.Լսեցին.- Ուսման առաջադիմությունը 1-ին կիսամյակում,1- ին կիսամյակի գնահատականների ամփոփման և հաճախումների արդյունքների հարցը :

Ելույթ ունեցավ դասղեկ Լուսինե Ազարյանը: Նա ամփոփ ներկայացրեց դասարանի աշակերտների 1-ին կիսամյակի արդյունքները: Արդյունքում՝ դասարանում կան 6 հարվածային՝ Ալեքսանյան Նելլի ,Գրիգորյան Անի, Գալստյան Նարե, Հովհաննիսյան Միլենա,Մարկոսյան Գոռ,, և Սարգսյան Միլենա: Մեկ աշակերտ՝ Շահբազյան Տիգրանը, չի առաջադիմում ֆիզիկա առարկայից :
Նշվեց նաև ,որ բացակայությունների թիվը 1- ին կիսամյակի ընթացքում կազմելէ 276 ժամ, առաջադիմությունը 96 տոկոս է, իսկ որակական ցուցանիշը՝ 24 տոկոս :

Որոշեցին.- Ծնողները որոշեցին քայլեր ձեռնարկել 2-րդ կիսամյակում առաջադիմությունը բարձրացնելու նպատակով: Հաճախակի կապ պահպանել դասղեկի հետ, հետևողական լինել դասապատրաստումներին:

2.Լսեցին.- Քննություններին պատրաստվելու հարցը:

Դասղեկ Լ. Ազարյանը խոսեց քննությունների կազմակերպման մասին: Նա ևս մեկ անգամ հիշեցրեց ծնողներին, որ հայոց լեզվի քննությունը լինելու է միասնական կենտրոնացված քննություն, որ աշակերտները լուրջ մոտենան և լավ պատրաստվեն տարեվերջյան քննաշրջանին:

Որեշեցին.- Լինել հետևողական աշակերտների նկատմամբ՝ քննություններին լավ պատրաստվելու և ներկայանալու համար:

3.Լսեցին.-Ընթացիկ հարցեր /կարգապահություն, վարք /:

Դասղեկը նշեց, որ երեխաները տարվա ընթացքում եղել են շատ աշխույժ, շարժուն, որի պատճառով հաճախ ունեցել են կարգապահական շեղումներ, որոնք շտկվել են դասղեկի հետևողական աշխատանքի շնորհիվ: Դասղեկը հորդորեց ծնողներին մեծ ուշադրությամբ հետևել իրենց երեխաների կարգապահությանն ու պահվածքին թե՛ դպրոցում, թե՛ փողոցում:

Որոշեցին. - Ծնողները խոստացան ամեն ինչ անել իրենց երեխաների առաջադիմությունը և կարգապահությունը բարձր մակարդակի վրա պահելու հարցում:

Ծնողական խորհրդի նախագահ ---------- Մ. Թարոյան
Քարտուղար՝ Լ.Թադևոսյան